ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<14>> հուլիսի 2022թ. N ՄՈ/424-2022

ք. Արմավիր

«ՔԱՐԱԿԵՐՏԻ N2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՎԱՐԴԻԹԵՐ ՊԱՊՈՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Վարդիթեր Պապոյանի 2022 թվականի հուլիսի 13-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Քարակերտի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վարդիթեր Պապոյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2022 թվականի հուլիսի 18-ից օգոստոսի 19-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վարդիթեր Պապոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Քարակերտի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Քարակերտի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կրթական աջակցությունների գծով տեղակալ Աստղիկ Մարտիրոսյանին:
3. «Քարակերտի N2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կրթական աջակցությունների գծով տեղակալ Աստղիկ Մարտիրոսյանի աշխատավարձի վճարումը 2022 թվականի հուլիսի 18-ից օգոստոսի 19-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Վարդիթեր Պապոյանին աշխատանքի մեջ համարել 2022 թվականի օգոստոսի 22-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

14.07.2022

X

VERIFIED OCSP 14.07.2022 15:31:51 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ